ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Շ. Խ. ՄՂՈՅԻ

Նշանակալից է Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության (ՔԴԿ) դերը Իրաքի քրդերի ազգային ինքնավարության համար մղած պայքարի մեջ։ Կուսակցությունը լայն գործունեություն ծավալեց ինքնավարական շարժման տարիներին։ Նրա գործունեությունն ընդգրկում էր հարցերի մի ամբողջ խումբ, որոնցից յուրաքանչյուրի լուծումն ու կարգավորումը նպաստում էր շարժման հաջողության ապահովմանը։

Հայտնի է, որ 1970 թ. մարտի 11-ին Իրաքում քուրդ ժողովրդի ազգային ինքնավարության հռչակմանը նախորդեց տևական ու համառ պայքար, որը կարճատև ընդմիջումներով տևեց շուրջ ինը տարի։ Այդ տարիներին ՔԴԿ ծավալեց քաղաքական, ռազմական, վարչական ու տնտեսական եռանդուն գործունեություն։ 1964 թ. վերջնականապես ձևավորվեց ռազմա-քաղաքական և վարչա-տնտեսական այն համակարգը, որի ստեղծման առաջին քայլերը վերաբերում էին զինված պայքարի նախնական շրջանին՝ 1961 թ. սկսած։ 1958 թ. հեղափոխությունից հետո Իրաքի մեկը մյուսին հաջորդած կառավարությունները չէին լուծում քրդերի ազգային ինքնավարության հարցը. այդ հողի վրա 1961 թ. սեպտեմբերից Քուրդիստանում սկսվեց զինված պայքար։ 1963 թ. նոյեմբերի 18-ի հեղաշրջման հետևանքով իշխանությունն անցավ Արեֆ-Յահյայի գլխավորած զինվորական խմբավորմանը։ Իրար հաջորդած տարբեր կառավարությունների ոսխտադրժությունը սասանել էր քրդերի հավատը քրդական հարցի խաղաղ կարգավորման հեռանկարների նկատմամբ։ Այն, թե քրդական շարժման մասնակիցների մեջ ինչպիսի արձագանք կգտնի բանակցությունների միջոցով ինքնավարության հարցի լուծման գաղափարը, մեծ չափով կախված էր 1964 թ. փետրվարի 10-ի զինադադարի պայմանների իրագործումից։ Անկարող գտնվելով ընկճելու քուրդ ապստամբների դիմադրությունը, Արեֆ-Յահյայի կառավարությունը զինադադար կնքեց քրդական շարժման ղեկավար գեներալ Մուստաֆա Բարզանու հետ։ Զինադադարի պայմանները չնայած չէին բավարարում քրդական շարժման պահանջները, սակայն ուղի էին հարթում հետագա արդյունավետ բանակցությունների համար։ Բայց փետրվարի 10-ի զինադադարն էլ կարճատև էր։ 1965 թ. ապրիլի սկզբներին նորից պատերազմ վերսկսվեց։

Այսպիսով, Իրաքի երեք տարբեր կառավարությունների կողմից քրդական հարցի խաղաղ կարգավորման պլանների մերժումը պարզորոշ ցույց էր տալիս, որ ազգային ինքնավարության համար զինված պայքարը կրելու է տևական բնույթ։ Այդ պայքարը 1964 թ. թևակոխում էր երրորդ տարին։ Քրդական հարցի շուտափույթ քաղաքական կարգավորման կամ կողմերից մեկի ռազմական վճռական հաղթանակի մասին խոսք լինել չէր կարող։ Այստեղից էլ բխում էր ազատագրված ավելի քան 20 հազ. քառ. կմ տերիտորիայի վրա

քաղաքական, վարչական ու տնտեսական որոշակի համակարգ ստեղծելու անհրաժեշտությունը։ Ինքնավարության համար մղվող պայքարի հաջողությունը ուղղակի կախման մեջ էր այն բանից, թե ինչպես էին գործելու նրան սպասարկող այս օղակները։

Հիշյալ հարցը, ինչպես նաև ներկուսակցական մի շարք այլ հարցեր, հանգամանալից քննարկման ենթարկվեցին ՔԴԿ 1964 թ. հուլիսի 1—7-ը տեղի ունեցած VI համագումարում, որն ընթացավ բարդ պայմաններում։ Քրդերին ինքնավարությունն շնորհելու կառավարության խոստումները չէին իրականացվում. հարցի լուծումը ձգձգվում էր և դառնում անհեռանկար։ Արեֆ-Յահյայի ռեժիմի քաղաքականությունը քրդական հարցում լուրջ կասկածներ էր առաջացնում կառավարության մտադրությունների նկատմամբ։ Այս բոլորը քրդական ազգային դեմոկրատական շարժման ղեկավարներին ստիպում էին ազատագրված շրջաններում այնպիսի համակարգ ստեղծել, որը կապահովեր զինված պայքարի հաջողությունը և տեղական վարչա-տնտեսական մարմինների արդյունավետ գործունեությունը։ Այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերի մեջ մեծ նշանակություն ուներ համագումարի որոշումը ՔԴԿ նախագահ և ազգային դեմոկրատական շարժման ղեկավար, գեներալ Մուստաֆա Բարզանու գլխավորությամբ «Հեղափոխական հրամանատարության խորհուրդ» ստեղծելու մասին։ Այն հռչակվեց իշխանության գերագույն մարմին ազատագրված շրջաններում։ Նախատեսվում էր դեմոկրատական հիմունքներով ստեղծել քաղաքական, վարչական ու տնտեսական մի շարք մարմիններ։ Այդ մարմինների մեջ պետք է ընդգրկվեին ոչ միայն Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության և պարտիզանական ջոկատների անդամներն ու ակտիվիստները, այլև քաղաքացիական բնակչության ներկայացուցիչները[1]։ ՔԴԿ VI համագումարի ընդունած ծրագիրը կոչված էր Իրաքում քրդական հարցի լուծման հիմք ծառայելու։ Այդ փաստաթղթի մեջ համանամանորեն վերլուծվում էր երկրի քաղաքական իրավիճակը, հիմնավորվում ազատագրված շրջաններում քաղաքական ու վարչա-տնտեսական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը։ Ազգային դեմոկրատական պայքարի ղեկավար օրգանի՝ «Հեղափոխական հրամանատարության խորհրդի»[2] ստեղծումից բացի ՔԴԿ առաջ քաշեց մի շարք պահանջներ, որոնք ունեին սկզբունքային նշանակություն շարժման ճակատագրի համար։ Մասնավորապես որոշվեց պատերազմական գործողությունների վերսկսման դեպքում հռչակել Իրաքյան Քուրդիստանի փաստական ինքնավարությունը։ Նկատի ունենալով Իրաքի յուրահատուկ քաղաքական իրավիճակը, որոշվեց ինչպես մինչև ինքնավարության հռչակումը, այնպես էլ նրանից հետո պահպանել քրդական պարտիզանական զորքերը, որպես քրդերին ընձեռված իրավունքների պաշտպանության երաշխիք։ ՔԴԿ VI համագումարում որոշում կայացվեց նաև «կուսակցության, պարտիզանական ջոկատների և քաղաքացիական ազգաբնակչության համագործակցության հիման վրա ազատագրված շրջաններում ստեղծելու վարչական մարմիններ»[3]։

Գեներալ Մ. Բարզանին և ՔԴԿ մյուս ղեկավարները չկարողացան անմիջապես ձեռնամուխ լինել ՔԴԿ VI համագումարի վերը թվարկված միջոցա-

---

[1] Центральный государственный архив Октябрьской революции и социалистического строительства СССР (այսուհետև՝ ЦГАОР СССР), ф. 4459, оп. 2, ед. хр. 3083, л. 211.

[2] Նույն տեղում, թ. 211։

[3] Նույն տեղում։

ումների իրագործմանը։ Մ. Բարզանին մեծ ջանքեր գործադրեց ոչ միայն տեղական ինքնավարման մարմիններ ստեղծելու, այլև կուսակցության միասնությունը ապահովելու, ազգային առաջադեմ ուժերի ջանքերը համախմբելու, նրանց պառակտման վտանգի դեմ պայքարելու ուղղությամբ։ Այս նպատակին ուղղված միջոցառումների մեջ ամենակարևորը, թերևս, 1964 թ. հոկտեմբերի 9—17-ը քրդական Ռանիա քաղաքում հրավիրված «ժողովրդական կոնֆերանսն» էր[4], որին ներկա էին բոլոր խավերի ներկայացուցիչները՝ ՔԴԿ ղեկավարներն ու ակտիվիստները, պարտիզանական միավորումների հրամանատարները, հայրենասիրաբար տրամադրված լիբերալ կալվածատերեր, բանվորներ ու գյուղացիներ, «Եվրոպայում սովորող քուրդ ուսանողների ասոցիացիայի» ներկայացուցիչը, Սիրիայի քրդական դեմոկրատական կուսակցության պատվիրակությունը, «Արտասահմանում քուրդ ժողովրդի իրավունքների պաշտպանության կոմիտեի» քարտուղարը, Քուրդիստանի քրիստոնեական համայնքների և բոլոր նրանց ներկայացուցիչները, ովքեր օգնում էին քրդական հեղափոխությանը[5]։

Կոնֆերանսը կառավարությանը քրդերի ազգային ինքնավարության պահանջներ պարունակող հուշագիր ներկայացրեց։ Ինչպես նախկին փաստաթղթերում, ՔԴԿ պնդում էր, որ քրդերի ազգային շարժման պահանջների բավարարումը անհնարին է առանց ամբողջ Իրաքում քաղաքական վիճակի կարգավորման և քաղաքական ազատությունների ու դեմոկրատական այլ ինստիտուտների հաստատման։

Ազատագրված շրջաններում քաղաքական և վարչա-տնտեսական որոշակի համակարգ ստեղծելու մասին ՔԴԿ VI համագումարի որոշումը անմիջականորեն շոշափում էր բնակչության բոլոր խավերի շահերը։ Ուստի պատահական չէր նրա առաջ քաշած խնդիրների մանրամասն ու հանգամանալից քննարկումը Ռանիայի կոնֆերանսում։ Կոնֆերանսը որոշում կայացրեց հինգ հանձնաժողովների (սահմանադրական, իրավաբանական, ռազմական, վարչական և ֆինանսական) ստեղծման մասին, որոնց ձեռքում էր կենտրոնացվում ողջ իշխանությունը[6]։ Միաժամանակ ստեղծվեց «Հեղափոխական հրամանատարության խորհուրդ», որը Ժան Պրադիեն համարում է «քուրդ ժողովրդի ներկայացուցիչների պառլամենտ»[7] և գործադիր կոմիտե, որն ընտրվում էր «Հեղափոխական հրամանատարության խորհրդի» կողմից։ Ստեղծման պահին «Հեղափոխական հրամանատարության խորհրդի» մեջ մտնում էր 63 անդամ։ «Հեղափոխական հրամանատարության խորհրդի» կազմը այս թվով չէր սահմանափակվում։ Այն կարող էր նաև ավելի լինել՝ ըստ հարկի։ Ուշագրավ է, որ «Հեղափոխական հրամանատարության խորհրդի» կազմում ներկայացված էին ՔԴԿ 27 անդամ և պարտիզանական միավորումների 11 ներկայացուցիչ։ «Քրդական պառլամենտի» մնացած 25 տեղերը «զբաղեցնում էին նեստորականների, խալդեյների, քուրդ հեղափոխականների կողմում պայքարող արաբ-մարտիկների, հայրենասիրաբար տրամադրված քուրդ անկախականների ներկայացուցիչները»[8]։ Ըստ երևույթին, բնականոն պետք է համարել այն փաստը, որ «Հեղա-

[4] Նույն տեղում, թ. 212։

[5] J. Pradier, Les Kurdes. Revolution silencieuse, Bordeaux, 1968, p. 212.

[6] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 3, ед. хр. 1192, л. 180.

[7] J. Pradiere, Les Kurdes, p. 218.

[8] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 3, ед. хр. 1192, л. 185.

փոխական հրամանատարության խորհրդի» տեղերի ճնշող մեծամասնությունը զբաղեցնում էին ՔԴԿ և պարտիզանական միավորումների ներկայացուցիչները։ Դա տրամաբանական արտահայտությունն էր ղեկավար ու կազմակերպող այն դերի, որ ՔԴԿ խաղում էր ինքնավարական շարժման մեջ։

«Հեղափոխական հրամանատարության խորհուրդն» իր նիստերը պետք է գումարեր չորս ամիսը մեկ։ Ինչպես նշեցինք, գործադիր իշխանության խնդիրներն իրագործելու էր գործադիր կոմիտեն (արաբերեն՝ «Մաքթաբ Թանֆիզի»)։ Իշխանության այս մարմինը կազմված էր 18 անդամներից, որոնցից 12-ը ՔԴԿ ներկայացուցիչներ էին։ Գործադիր կոմիտեի քարտուղար (փաստական ղեկավար) ընտրվեց ՔԴԿ Կենտկոմի առաջին քարտուղար Մուհամեդ Հաբիբ Քերիմը։ Կոմիտեն, սպասարկող անձնակազմի հետ միասին, բաղկացած էր 100 հոգուց։ Թեև ռազմա-քաղաքական լարված ու երբեմն փոփոխվող իրադրության պատճառով դժվար էր մշտական աշխատավայր ընտրել, այդուհանդերձ ի տարբերություն, օրինակ, ռազմական հանձնաժողովի, «Մաքթաբ Թանֆիզին» ուներ աշխատանքի համեմատաբար որոշակի վայր և միայն խիստ անհրաժեշտության դեպքում էր փոխում այն։ Քրդական ինքնավարական շարժման ղեկավարությունն այս կերպ աշխատում էր մատչելի և դյուրին դարձնել ազգային իշխանության այս մարմնի կապերը բնակչության հետ, որոնք կենսական նշանակություն ունեին շարժման համար։ «Մաքթաբ Թանֆիզիի» պաշտպանության խնդիրը դրված էր «փեշմերգայի»[9] մեկ ստորաբաժանման վրա։ Այն ապահովված էր նաև հակաօդային պաշտպանության միջոցներով[10]։

«Մաքթաբ Թանֆիզին» ուներ երկու ենթակոմիտե՝ հարկային և իրավաբանական։ Առաջինը զբաղվում էր տարբեր հարկերի սահմանումով ու դրանց գանձման խնդրով, իսկ իրավաբանական ենթակոմիտեի կամ հանձնաժողովի պարտականությունն էր բնակչության մեջ կամ բնակչության և ազգային իշխանության մարմինների միջև ծագած վեճերի կարգավորումը։ Այս կոմիտեների նպատակն էր մի կողմից ապահովել ինքնավարական շարժման սպասարկումը, մյուս կողմից՝ որոշակի հարկային քաղաքականություն կիրառելով և հնարավոր օրինախախտումների դեմ պայքարելով՝ նպաստել ազգային իշխանության մարմինների գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը։

Հարկային կոմիտեն սահմանեց բնամթերային հարկ, որը հավասար էր բերքի 5%-ին։ Կոմիտեն ուներ իր շրջանային, այսպես կոչված, «գրասենյակները», որոնցից յուրաքանչյուրի մեջ մտնում էին երեքական մարդ՝ կենտրոնական պետական մարմնի, բանակի և տեղական բնակչության ներկայացուցիչները։ Տեղական հարկային գրասենյակներին իրավունք էր վերապահված անհրաժեշտության դեպքում վերանայել բերքի 5%-ի չափով հարկեր հավաքելու որոշումն այն ավելացնելու կամ պակասեցնելու խմաստով՝ կապված կոնկրետ հանգամանքների հետ։ Քուրդիստանի գյուղացիությունը ինքնավա-

---

9 «Փեշմերգա» բրդերեն նշանակում է «մահվանն ընդառաջ գնացողներ», «մահից չվախեցողներ». այսպես են կոչվում քրդական բանակի հատուկ, առավել մարտունակ ստորաբաժանումները։

10 J. Pradier, Les Kurdes, p. 215.

ական շարժմանը օգնում էր նաև կամավոր նվիրատվություններով և այլն։ Դրանք երբեմն միջին հաշվով կազմում էին բերքի 25%-ը[11]։

Քուրդ ֆեոդալների և կալվածատերերի նկատմամբ ՔԴԿ քաղաքականությունն իր արտացոլումն է գտել նրա ծրագրերում։ Կուսակցությունը գտնում է, որ նրանց սեփականատիրական իրավունքները պետք է խիստ կրճատվեն և ի վերջո հասցնեն ֆեոդալական հարաբերությունների վերացմանը։ Այս ծրագիրը մասամբ իրագործվում էր։ Սակայն նրա լրիվ և հետևողական իրագործումը, ՔԴԿ ղեկավարների կարծիքով, դժվար էր պատերազմական իրավիճակի պայմաններում։ Նրանք գտնում էին, որ նման քաղաքականության կիրառումը կմեծացներ ինքնավարական շարժման հակառակորդների թիվը։ Թերևս հակաֆեոդալական, հակակալվածատիրական միջոցառումների չափավոր բնույթի պատճառներից մեկն այս էր։ Սակայն գլխավորն ու հիմնականը այն էր, որ ՔԴԿ կազմում գտնվող քրդական ունևոր խավերի ներկայացուցիչներն աշխատում էին կուսակցության գործունեությունը սահմանափակել որոշակի շրջանակներով, թույլ չտալով գրպեսզի շարժումը զարգանա խորությամբ։

Մ. Բարզանու վերահսկողության տակ գտնվող շրջանների վարչա-տնտեսական մարմինների կազմը և նրանց կողմից ձեռնարկվող քայլերը այնուհանդերձ ունեին առաջադիմական բնույթ և բխում էին ՔԴԿ քաղաքականությունից։ Ինքնավարության համար մղվող պայքարի հիմնական ծանրությունն ընկած էր ժողովրդի, հատկապես աշխատավորական զանգվածների ուսերին, որը բացասաբար էր անդրադառնում նրա կենսամակարդակի վրա։ Քուրդիստանի բնակչությունը դիմում էր այդ զոհողությանը ոչ միայն իր քաղաքական ու ազգային, այլև տնտեսական վիճակը բարելավելու գիտակցությամբ։ ՔԴԿ քաղաքականությունը թելադրված էր ստեղծված իրավիճակով։ Կուսակցության ղեկավարությունը հոգում էր ոչ միայն զինված պայքարի ծախսերը, կազմակերպում նրա օղակների կանոնավոր սպասարկումը, այլև առավելագույն չափով հաշվի էր առնում գյուղացիության և աշխատավոր մյուս խավերի շահերը։ Ազատագրված շրջաններում կիրառվող միջոցառումների մեջ ոչ միայն բանակի և պետական իշխանության մարմինների, այլև քաղաքացիական ազգաբնակչության ներկայացուցիչների մասնակցությունը հանդիսանում էր ՔԴԿ և ժողովրդի տարբեր խավերի համագործակցության արտահայտությունը։ Ուշագրավ է այն փաստը, որ «Հեղափոխական հրամանատարության խորհուրդը» և «Մաքթաբ Թանֆիգին» կտրականապես արգելում էին ժողովրդից բռնի հարկեր գանձելը։ Եթե ստեղծված դրության թելադրմամբ, այնուամենայնիվ, ռազմական կամ քաղաքացիական իշխանությունները հարկադրված էին լինում բնակչությունից պարենամթերք և այլն վերցնել, ապա այդ դեպքում դրամական փոխհատուցում էին կատարում[12]։

ՔԴԿ-ն քայլեր ձեռնարկեց նաև դատաքննչական մարմինների աշխատանքները կարգավորելու ուղղությամբ։ Ազգային դեմոկրատական շարժման ղեկավարության որոշմամբ ազատագրված շրջաններում ստեղծվեցին քաղաքացիական 20 դատարաններ։ Եթե հանցագործը ենթակա էր ավելի քան երեք տարվա ազատազրկման, նրա գործը հանձնվում էր ռազմական տribունալին։ Բացի շրջանային դատարաններից, 1964 թ. կազմակերպվեց հեղափոխական

11 Նույն տեղում, էջ 216։

12 Նույն տեղում։

գերագույն դատարան, որը քննում էր քաղաքական բանտարկյալների, լրտեսների, դավաճանների, ինչպես նաև մեղադրվող զինծառայողների գործերը[13]։ Հեղափոխական գերագույն դատարանի նստավայրը Մավաթն էր։ Մեղադրվողին իրավունք էր վերապահվում ունենալ դատապաշտպան։ Պատժի առավելագույն չափը նախատեսվում էր ինքնավարական շարժման դեմ պայքարող «ջաշերի»[14] նկատմամբ։

Քրդական ազգային դեմոկրատական շարժման ղեկավարության ձեռնարկած հիշյալ միջոցառումներն ունեին բացառիկ կարևոր նշանակություն։ Ռազմական ու վարչա-տնտեսական մարմինների ստեղծումը թելադրված էր ստեղծված իրադրության պահանջով։ Քրդական ազգային ինքնավարության պրոբլեմը լուծելու հարցում կառավարությունը ելնում էր ուժի դիրքերից։ Ուստի ռազմական, քաղաքական ու տնտեսական իշխանությունների գործունեության մեջ հստակություն մտցնելը, նրանց նորմալ աշխատանքի կազմակերպումը կոչված էին ինքնավարության համար տևական պայքարի հիմք ծառայելու։

ՔԴԿ-ն և քրդական ազգային մյուս ուժերը զինված պայքարի տարիներին ազգային ինքնակառավարման մարմինների ստեղծման որոշակի փորձ կուտակեցին։ 1964 թ. հոկտեմբերին այս ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները դրա տրամաբանական արդյունքն էին։

Ռանիայի կոնֆերանսի հրավիրումը նշանակալից քաղաքական իրադարձություն էր։ Այն վկայում էր ինքնավարության համար մղվող պայքարում քրդական հասարակայնության ամենալայն խավերի շահագրգռվածության մասին։ Առավել ուշագրավ է այն, որ քրդական շարժման մեջ որոշակի տեղաշարժ էր նկատվում դեպի ձախ։ Հայտնի է, որ ՔԴԿ-ն ունի խայտաբղետ դասակարգային կազմ, որը չէր կարող հետք չթողնել նրա գործունեության վրա։ Բնական է, որ կուսակցության շարքերում գտնվող բուրժուական ու մանր բուրժուական տարրերը և լիբերալ կալվածատերերն աշխատում էին կուսակցության քաղաքականությունը ծառայեցնել իրենց նպատակներին, ինքնավարության համար մղվող պայքարը պահել այն շրջանակներում, որոնք կբավարարեին նրանց նեղ դասակարգային շահերը։ Քուրդիստանում ինքնավարության համար զինված պայքարի սկսվելու պահից ի վեր ուժերի հարաբերակցությունը որոշակի էվոլյուցիա ապրեց։ Ազգային ինքնավարության համար պայքարի հիմնական ուժը քուրդ գյուղացիությունն էր, աշխատավորական ստորին խավերը, որոնք կրում էին պայքարի ողջ ծանրությունը։ Նմանօրինակ վիճակը ինքնաբերաբար բարձրացրեց այդ ուժերի հետ ըստ արժանվույն հաշվի նստելու խնդիրը։ ՔԴԿ ներսում ծագած տարաձայնությունների ժամանակ եղավ մի պահ, երբ Մ. Բարզանու և ՔԴԿ մյուս ղեկավարների դիրքերի կայունությունը տարակուսանքի տեղիք կարող էր տալ։ Նման իրավիճակի մեջ Մ. Բարզանին և ՔԴԿ ղեկավարները ստիպված էին ավելի ընդլայնել կապերը ինքնավարական շարժման շարքային մասնակիցների հետ։ Դա ակնառու կերպով դրսևորվեց նաև Ռանիայի կոնֆերանսի հրավիրման մեջ։

Ինքնավարական մարմինների ստեղծումը Քուրդիստանում և նրանց գործունեությունը վկայում էին ոչ միայն ռազմական ու քաղաքական իմաստով

---

13 Նույն տեղում։

14 «Ջաշեր» (քրդերեն՝ իշուկներ) կոչում էին քուրդ այն դավաճաններին, որոնք վարձատրվելով՝ կառավարական զորքերի հետ պայքարում էին Մ. Բարզանու գլխավորած ինքնավարական շարժման դեմ։

քրդական ազգային դեմոկրատական շարժման ուժի, այլև շարժման ղեկավարության քաղաքական հասունության, պայքարի մասնակիցների գիտակցության որոշակի աճի մասին։ Ինքնակառավարման մարմինների ստեղծման սկզբունքները Իրաքի քրդական շրջանների պայմաններում, երկրի կյանքի դեմոկրատացման ճանապարհին առաջադիմական քայլ էին։ Չպետք է աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ այս միջոցառումները ձեռնարկվում էին փաստորեն պատերազմի կամ նրա սկսման հնարավորության առկայության պայմաններում։ Այլ գործոնների հետ միասին դա ևս բացատրեր անդրադարձավ քրդական շարժման ղեկավարության գործողությունների ընդարձակման և վճռականության վրա։ Ազգային ինքնավարության համար մղվող պայքարում քրդական ազգային դեմոկրատական շարժման ղեկավարությունը աշխատում էր որոշակի չափով պահպանել, այսպես կոչված, «ազգային միասնությունը»։ Ուստի, ազատագրված շրջաններում կիրառվող միջոցառումները շատ դեպքերում ունեին չափավոր բնույթ։ Շարժման ղեկավարությունն աշխատում էր իր կողմում պահել ունևոր խավերի որոշ թվով ներկայացուցիչների։ Այդուհանդերձ, վերը թվարկած քաղաքական ու տնտեսական քայլերը որոշակիորեն նպաստում էին քուրդ ժողովրդի լայն խավերի գործունեության ակտիվացմանը, հարվածում դարերի ընթացքում արմատավորված ավանդույթներին ու կարգերին, որոնց պայմաններում քուրդ ֆեոդալները և մահմեդական հոգևորականությունն ունեին ըստ էության անսահմանափակ իշխանություն։ Քրդական շարժման ղեկավարությունը բռնագրավում էր և գյուղացիների միջև բաժանում այն ֆեոդալների և խոշոր կալվածատերերի հողատարածությունները, որոնք ինքնավարական շարժման նկատմամբ բռնել էին թշնամական դիրք և պայքարում էին նրա դեմ։ Դժվար չէ նկատել, որ այս քայլերը շարժմանը տալիս էին նաև որոշակի հակաֆեոդալական բնույթ։

Ազգային ինքնավարության համար մղվող պայքարի տարիներին ՔԴԿ-Ն մշտապես վարում էր շարժման առաջադիմական բնույթն ապահովող քաղաքական գիծ։ Նա պայքարում էր շարժմանը զուտ քրդական և նեղ ազգայնական բնույթ տալու միտումների դեմ։ Մ. Բարզանին և քրդական շարժման այլ ղեկավարներ կուսակցության ծրագրային փաստաթղթերում ու բազմաթիվ պաշտոնական հայտարարություններում ընդգծում են, որ ինքնավարության համար քրդերի պայքարը կազմում է Իրաքի ժողովրդի ընդհանուր դեմոկրատական պայքարի բաղկացուցիչ մասը։ «Քուրդիստանի ինքնավարությունը,— նշել է Մ. Բարզանին,— բավական չէ, որպեսզի Իրաքում վերականգնվի խաղաղությունն ու համերաշխությունը։ Միաժամանակ անհրաժեշտ է վերջ տալ ռազմական խռովություններին ու պետական հեղաշրջումներին, որոնք արգելակում են Իրաքի զարգացումը։ Ես երբեք չեմ եղել արաբների թշնամին. արաբները և քրդերը հավասարապես են տուժում հակաժողովրդական ռեժիմների քաղաքականությունից, ուստի քրդական ինքնավարությունն աներևակայելի է առանց ամբողջ Իրաքում դեմոկրատական հաստատությունների ու կարգի ստեղծման»[15]։

Այս առումով պատահական չէր, որ Իրաքի արաբական հասարակայնության առաջադեմ խավերը համակրանքով էին վերաբերվում քրդական ինքնավարական շարժման նկատմամբ, օգնում նրան։ Հայտնի է, օրինակ, որ քրդա-

[15] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 25, ед. хр. 2016, л. 45.

կան ինքնավարության շարժման տարիներին ոչ միայն բուն Քուրդիստանում, այլև Իրաքի արաբական շրջաններում կազմակերպվում էր քուրդ ինքնավարներին օգնություն ցույց տալու գործը։ Բնորոշ են այս ուղղությամբ նաև քրդական շարժման ղեկավարների ու մասնակիցների քայլերը։ Կառավարական բանակի շարքերը դասալքած և քրդական շարժման մասնակիցների մոտ ապաստանած բոլոր զինծառայողներին ազատ իրավունք էր տրվում որոշելու քրդական բանակի շարքերում ծառայելու կամ տուն վերադառնալու հարցը, ընդ որում՝ տուն վերադառնալու ցանկություն հայտնած զինծառայողներն անլեգալ կերպով իրենց հարազատ վայրերն էին հասցվում «փեշմերգաների» ուղեկցությամբ։ «Քրդական հեղափոխությունը,— գրում է Ժ. Պրադիեն,— մշտապես հստակ կերպով սահմանազատում է իրաքյան ժողովրդին Իրաքի կառավարությունից։ Առաջինը նրանց բարեկամն է, երկրորդը՝ թշնամին»[16]։ Հետաքրքիր էր նաև գերիների նկատմամբ տարվող քաղաքականությունը։ Կառավարական բանակի գերի ընկած զինծառայողների մի մասը Քուրդիստանում մղվող եղբայրասպան պատերազմին այլևս չմասնակցելու պայմանով ազատ էր արձակվում։ «Որպեսզի կոնֆլիկտը չխորացվի, Մուստաֆա Բարզանին միշտ ձգտում էր այնպես անել, որ պատերազմը ռասայական բնույթ չկրի։ Իր հաղորդագրությունների մեջ նա երբեք չի հարձակվում արաբների վրա... Նրա փեշմերգաներին ցուցում է տրված երբեք չսպանել հանձնվող զինծառայողներին։ Նրանց ազատում են, վերցնելով զենքը»[17],— գրում է Քուրդիստան այցելած ֆրանսիական մի դիտորդ։

Զինված պայքարի տարիներին ՔԴԿ-ն Իրաքի կոմկուսից հետո երկրորդ կուսակցությունն էր, որ իր աշխատանքների մեջ մեծ տեղ էր հատկացնում քրդական ինքնավարական շարժման բնույթի և նպատակների հարցի լուսաբանմանն արաբական շրջաններում։ Ինքնավարության համար քրդերի մղած պայքարի բոլոր փուլերում Իրաքի կոմկուսը և Քուրդիստանի նրա մասնաճյուղը միշտ հետևողականորեն պաշտպանել են քրդերին ազգային ինքնավարության լայն իրավունքներ շնորհելու պահանջը։ Կոմկուսի բոլոր հիմնական ու կարևոր փաստաթղթերում պատշաճ տեղ է տրվել քրդական հարցի լուծմանը։ Քրդական հարցում վարած այս քաղաքականությունն ապահովել է կոմկուսի լայն հեղինակությունը Քուրդիստանում։ Պայքարի հաջողության համար մեծ նշանակություն ուներ նաև Իրաքի կոմկուսի և ՔԴԿ քաղաքական բացատրական աշխատանքը Իրաքի քրդական շրջաններում։

Տեղական կառավարման մարմինների ստեղծման ուղղությամբ ՔԴԿ գործունեությունն ուներ ոչ միայն զուտ պրակտիկ նշանակություն, այլև մեծ հարված էր հետադիմական շրջանների պրոպագանդային, որը շարունակ պնդում էր, թե քրդական ազգային դեմոկրատական շարժումը խռովարարների, ժողովրդից կտրված սեպարատիստների բունտ է և դատապարտված է կործանման։ ՔԴԿ-ն ցույց տվեց, որ իր գլխավորած պայքարն ինքնանպատակ չէ, որ նա պայքարում է ազգային ինքնավարության մի համակարգի համար, որի հիմքերը դրվում են։

1968 թ. հուլիսի 17-ի հեղափոխության հետևանքով Իրաքում վերջ տրվեց Արեֆ-ցահյայի ռազմաբյուրոկրատական ռեժիմին։ Իշխանության գլուխ

[16] J. Pradier, Les Kurdes, p. 95.
[17] „La Croix", 29. IX. 1966.

անցած ԲԱԱՍ կուսակցությունը գեներալ Ահմեդ Հասան ալ-Բաքրի գլխավորությամբ հայտնեց իր վճռականությունը երկրի առջև կանգնած մի շարք հարցեր, այդ թվում և քրդական ազգային ինքնավարության պրոբլեմը լուծելու մասին։ Անցած հինդ տարիները նշանավորվեցին Բաքրի կառավարության արգասավոր գործունեությամբ. երկրում հաստատվեց առաջադիմական ռեժիմ։ Իրաքում պաշտոնապես հռչակվեց քուրդ ժողովրդի ազգային ինքնավարություն, կառավարությունը Սովետական Միության հետ կնքեց բարեկամության և համագործակցության պայմանագիր, ազգայնացվեց օտարերկրյա նավթային ընկերությունը, ստեղծվեց ազգային առաջադիմական ճակատ, ձեռնարկվեցին քաղաքական ու սոցիալ-տնտեսական կարևոր այլ միջոցառումներ։ Անտարակույս, այդ բոլոր հաջողությունները հնարավոր դարձան մասամբ էլ քրդական պրոբլեմի խաղաղ լուծման քաղաքականության հռչակման՝ երկրի միասնության ամրապնդման այդ կարևորագույն նախապայմանի ստեղծման շնորհիվ։

ДЕМОКРАТИЧЕСКАЯ ПАРТИЯ КУРДИСТАНА И СОЗДАНИЕ АВТОНОМНЫХ ОРГАНОВ

Ш. Х. МГОИ

Резюме

В годы борьбы за национальную автономию в Иракском Курдистане Демократическая партия Курдистана развернула широкую деятельность в разных областях. Одним из важнейших итогов ее деятельности было создание национальных органов управления. В 1964 г. на VI съезде ДПК и «Народной конференции» в Ранни были приняты решения об организации законодательного («Совет революционного командования») и исполнительного («Мактаб Танфизи») органов в районах, контролируемых курдскими национально-демократическими силами. Была установлена налоговая система, учреждены судебно-следственные органы. Создание национальных органов управления стало одним из важнейших условий успеха национально-демократической борьбы курдов, которая в дальнейшем привела к провозглашению автономии курдского народа в Иракской республике.